«Սեյսմիկ պաշտպանության բնագավառում պետական ծրագրերի իրականացման համակարգման և վերահսկման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2017 թվականի _____ «_____»-ի N ____-Ն

ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԿԱՐԳԸ

ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության սեյսմիկ անվտանգության համակարգի զարգացման հայեցակարգով նախատեսված սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1760-Ն որոշմամբ հաստատված հավելվածի տասնութերորդ կետին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 10-ի N 1286-Ն որոշման 1-ին կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել սեյսմիկ պաշտպանության բնագավառում պետական ծրագրերի (այսուհետ՝ ծրագրեր) իրականացման համակարգման և վերահսկման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Ծրագրերի կատարող հանդիսացող հանրապետական գործադիր մարմինների ղեկավարներին՝ յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել ծրագրերի կետերի կատարման համար նախատեսվող անհրաժեշտ

ֆինանսական միջոցների և ֆինանսավորման աղբյուրների վերաբերյալ առաջարկություններ:

3. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ ծրագրերում ներառված միջոցառումների իրականացման ֆինանսավորման հնարավորության հարցը քննարկել յուրաքանչյուր տարվա Հայաստանի Հանրապետության բյուջետային գործընթացների շրջանակներում՝ Հայաստանի Հանրապետության շահագրգիռ պետական կառավարման մարմինների կողմից սահմանված կարգով ներկայացված հայտերի առկայության դեպքում:
4. Ծրագրերի կատարող հանդիսացող հանրապետական գործադիր մարմինների ղեկավարներին՝ սահմանված պարբերականությամբ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ ՀՀ ԱԻՆ) սեյսմիկ ռիսկի նվազեցման կառավարման կենտրոն ներկայացնել տեղեկատվություն իրենց կողմից իրականացված միջոցառումների մասին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված

ՀՀ կառավարության 2017 թվականի

_____-ի N_____- Ն որոշման

ԿԱՐԳ

ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են սեյսմիկ պաշտպանության բնագավառում պետական ծրագրերով նախատեսված սեյսմիկ վտանգի և ռիսկի գնահատման, սեյսմիկ ռիսկի նվազեցման աշխատանքների համակարգմանը և վերահսկմանն առնչվող պետական կառավարման հանրապետական, տարածքային ու տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների միջև լիազորությունների տարանջատման, ինչպես նաև նրանց համագործակցության հարցերը:
2. ՀՀ մարզերը և ՀՀ համայնքները կազմում են սեյսմիկ ռիսկի նվազեցման մարզային և համայնքային ծրագրեր: Սեյսմիկ ռիսկի նվազեցման մարզային և համայնքային ծրագրերը հանդիսանում են ՀՀ մարզերի և ՀՀ համայնքների զարգացման ծրագրերի անբաժանելի մասը:
3. Պետական կառավարման հանրապետական մարմիններն ու կազմակերպություններն (համաձայնությամբ) իրենց ամենամյա պլաններում ներառում են սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումներ:
4. Սեյսմիկ ռիսկի նվազեցումը իրականացվում է ՀՀ կառավարության 1999թ. հունիսի 10-ի N 429 որոշմամբ հաստատված ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) դրույթներին համապատասխան:
5. Սեյսմիկ ռիսկի նվազեցման մարզային, համայնքային, պետական կառավարման հանրապետական մարմինների և կազմակերպությունների ծրագրերը հանդիսանում են Ծրագրի ենթածրագրեր:
6. Ծրագրի և ենթածրագրերի կատարման համակարգող լիազոր մարմինը ՀՀ ԱԻՆ-ն է:
7. Սեյսմիկ պաշտպանության բնագավառի հատուկ, կարևոր և ընդհանուր նշանակության օբյեկտների սեփականատերերը պատասխանատու են օբյեկտների սեյսմակայունության ապահովման և աշխատակիցների անվտանգության համար:
8. Ծրագրերի ֆինանսավորումն իրականացվում է պետական և/կամ համայնքային բյուջեների, հատուկ, կարևոր և ընդհանուր նշանակության օբյեկտների սեփականատերերի և օրենքով չարգելված այլ միջոցներով, սահմանամերձ բնակավայրերում՝ նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին» N 1708-Ն որոշման համաձայն:

1. ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

9. ՀՀ տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման համակարգը ընդգրկում է.

1) ՀՀ պետական կառավարման հանրապետական և տարածքային մարմինները՝ ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով հանձնարարված գործառույթների մասով, ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինները՝ օրենքով իրենց վերապահված լիազորությունների պահանջով, հասարակական կազմակերպությունները (համաձայնությամբ), այլ կազմակերպություններ (համաձայնությամբ) և քաղաքացիներ (համաձայնությամբ), որոնց գործողությունները սեյսմիկ պաշտպանության ոլորտում համակարգում է ՀՀ ԱԻՆ-ը:

2) ՀՀ ԱԻՆ սեյսմիկ ռիսկի նվազեցման կառավարման կենտրոն հանդիսանում է սեյսմիկ պաշտպանության ոլորտի պետական մարմինը:

10. Սեյսմիկ պաշտպանության համակարգին առնչվող դրույթներ ներկայացված են հետևյալ իրավական ակտերում.

1) «Սեյսմիկ պաշտպանության մասին» 2002թ. հուլիսի 6-ի ՀՕ-376 ՀՀ օրենքը (հոդվածներ 6, 8, 12-17),

2) «Տեղական ինքնակառավարման մասին» 2002թ. մայիսի 7-ի ՀՕ-337 ՀՀ օրենքը (35-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետ, 41-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետ)

3) «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» 2008թ. դեկտեմբերի 26-ի ՀՕ-5-Ն ՀՀ օրենքը (66-րդ հոդված)

4) Հայաստանի Հանրապետության Նախագահի 2010թ. օգոստոսի 28-ի «Հայաստանի Հանրապետության սեյսմիկ անվտանգության համակարգի զարգացման հայեցակարգը հաստատելու մասին» ՆԿ-140-Ն կարգադրությունը (կարգադրությամբ հաստատված հավելվածի 21-39 կետեր)

5) ՀՀ կառավարության 1999թ. հունիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման համալիր ծրագրի մասին» N 429 որոշումը,

6) ՀՀ կառավարության 1999թ. հունիսի 7-ի «Երևանի տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման համալիր ծրագրի մասին» N 392 որոշումը,

7) ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության մարզերի և բնակավայրերի զարգացման ծրագրերում սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզների ներառման, արտակարգ իրավիճակների կանխարգելմանն ուղղված սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումների նախատեսման և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մարտի 7-ի N 261-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1351–Ն որոշումը,

11. ՀՀ քաղաքացիները, հասարակական և այլ կազմակերպությունները սեյսմիկ ռիսկի նվազեցման հարցերով համագործակցում են լիազոր մարմնի հետ կամ իրականացնում են սեյսմիկ պաշտպանության միջոցառումներին առնչվող՝ լիազոր մարմնի աշխատակիցների օրինական ցուցումները:

12. Ծրագրով նախատեսվող միջոցառումները սեյսմիկ պաշտպանության ոլորտի պետական մարմնի կողմից ներկայացվում և ներառվում են սեյսմիկ պաշտպանության պետական ոչ առևտրային կազմակերպությունների ամենամյա պլաններում: Ամենամյա միջոցառումները, ներկայացված հայտերի հիման վրա, ֆինանսավորվում են պետական բյուջեից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

Սեյսմիկ վտանգի և դրա հետ կապված երկրորդային վտանգավոր երևույթների, սեյսմիկ ռիսկի գնահատումներ կարող են իրականացնել այլ շահագրգիռ մարմիններ և կազմակերպություններ, օրենսդրությամբ սահմանված կարգով դրանք ներկայացնելով լիազոր մարմնին:

Սեյսմիկ պաշտպանության տեսակետից արդյունավետ հողօգտագործումն արտացոլվում է ոլորտի լիազոր մարմնի կողմից հաստատված սեյսմիկ վտանգի և սեյսմիկ ռիսկի (առկայության դեպքում) քարտեզներում, որոնք ներկայացվում են քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի կազմման ժամանակ:

13. Սեյսմիկ ռիսկի նվազեցման վերաբերյալ առկա անհրաժեշտ տեղեկատվությունը ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները միմյանց տրամադրում են անվճար:

- ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

14. Սեյսմիկ ռիսկի նվազեցումը բնակչության պատրաստվածության մակարդակի բարձրացման, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների՝ սեյսմիկ ռիսկի կառավարման նախապատրաստման, անձի հոգեբանական խոցելիության նվազեցման, բժշկական պատրաստվածության բարձրացման, մասնագիտական փրկարարական նյութատեխնիկական բազայի և հանդերձավորման հետագա զարգացման, բնակչության արտագաղթի կանխման ուղղություններով իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի փետրվարի 9-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի N 429 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 138–Ն որոշման թիվ 2 հավելվածով հաստատված Ծրագրի ժամանակացույցի:
15. Սեյսմիկ պաշտպանության ոլորտում բնակչության պատրաստվածության մակարդակի բարձրացման, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների՝ սեյսմիկ ռիսկի կառավարման նախապատրաստման, անձի հոգեբանական խոցելիության նվազեցման համար մշակվում են ծրագրեր, որոնց ֆինանսավորումը իրականացվում է ամենամյա ներկայացված հայտերով տրամադրվող միջոցներից:

Բժշկական պատրաստվածության բարձրացման, մասնագիտական փրկարարական նյութատեխնիկական բազայի և հանդերձավորման հետագա զարգացման, բնակչության արտագաղթի կանխման ծրագրերն իրականացվում են պետական կառավարման հանրապետական և մարզային մարմիններին ամենամյա հատկացվող միջոցների հաշվին:

16. ՀՀ գերատեսչությունները, համաձայն Ծրագրի, մասնակցում են սեյսմիկ ռիսկի նվազեցմանն առնչվող համապատասխան տվյալների բազայի ստեղծման և/կամ մշակման աշխատանքներին. աշխատանքային կարգով ճշտվում են տրամադրվող կամ ստացվող տվյալների ցանկը և փոխանցման եղանակը: Իրավական ակտերով չսահմանված դեպքերում անհրաժեշտ տեղեկատվության փոխանցումը կամ հանձնումը կատարվում է մինչև հաջորդ տարվա հունվարի 25-ը:
17. ՀՀ մարզերի և համայնքների սեյսմիկ ռիսկի նվազեցման աշխատանքներն ըստ փուլերի իրականացվում են համաձայն ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության մարզերի և բնակավայրերի զարգացման ծրագրերում սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզների ներառման, արտակարգ իրավիճակների կանխարգելմանն ուղղված սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումների նախատեսման և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մարտի 7-ի N 261-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1351-Ն որոշման:
18. Մարզային և համայնքային զարգացման ծրագրերում սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումները ընդգրկվում են երկու փուլով.

1) առաջին փուլ՝ բնակչության ուսուցում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների նախապատրաստում, մարզերի և համայնքների սեյսմիկ ռիսկի (ներառյալ շենքերի ու շինությունների սեյսմիկ խոցելիության մակարդակի) գնահատման աշխատանքներ,

2) երկրորդ փուլ՝ շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացման միջոցառումներ: Սեյսմիկ ռիսկի նվազեցման աշխատանքների երկրորդ փուլն իրականացվում է լիազոր մարմնի կողմից սեյսմիկ ռիսկի քարտեզներին առդիր ներկայացվող առաջարկությունների և այլ հետազոտությունների հաշվառմամբ. մշակվում է տարածքների հատուկ և կարևոր նշանակության օբյեկտների սեյսմիկ խոցելիության նվազեցման աշխատանքների երկրորդ փուլի ծրագիր և ներկայացվում ՀՀ կառավարության հաստատմանը:

ՀՀ կառավարության կողմից օբյեկտների սեյսմիկ խոցելիության նվազեցման հաստատված ծրագրերը ներառվում են մարզային և համայնքային զարգացման ծրագրերում:

19. ՀՀ մարզպետարանի, համայնքապետարանի և օբյեկտների սեփականատերերի կողմից մշակվում են սեյսմիկ պաշտպանության բնագավառի հատուկ և կարևոր նշանակության շենքերի և շինությունների սեյսմիկ խոցելիության նվազեցման միջոցառումների ճյուղային, պետական նպատակային, տարածքային և համայնքային ժամանակացույցեր: Ժամանակացույցերի կատարումը սույն հավելվածի 16-րդ և 20-րդ կետերում բերված ընթացակարգով վերահսկվում է լիազոր մարմնի կողմից:

20. ՀՀ համայնքները զարգացման պլաններով նախատեսված սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումների մասին յուրաքանչյուր տարի, այնուհետ կատարված աշխատանքների վերաբերյալ մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 1-ը, տեղեկատվությունը ներկայացնում են ՀՀ մարզպետարան: ՀՀ մարզպետարանները մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 20-ը համայնքներից ստացված մարզային ամփոփ տեղեկատվությունը, աշխատանքների կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հայտերի հետ, ներկայացնում են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, որը մինչև հաջորդ տարվա հունվարի 15-ը մարզերից ստացված ամփոփ տեղեկատվությունը, ներառյալ ֆինանսական ապահովումը, ներկայացնում է ՀՀ ԱԻՆ:
21. ՀՀ բոլոր մարզերի և գերատեսչությունների ներկայացրած տեղեկատվությունը ներառվում է սեյսմիկ ռիսկի նվազեցման կարճաժամկետ ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման վերաբերյալ Ազգային ժողովի նիստում սեյսմիկ պաշտպանության բնագավառում լիազորված մարմնի ղեկավարի ամենամյա զեկույցում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ